



87 (271). ԹՂԹԸԲԱՑ

Ի՛աղա հարս մե կը բերին, էդի մեջքից թուկ կէղնի, կը թացցու ուր ստակ: Կիսուր կէրթա մըա թղթըբաց, օր դիր մե դրե, օր հարս չը թացցու ուր տակ: Թղթըբաց թուղթ կը դրե, կըսե.

— Տա՛ր կապե հարսիդ մեջք, կամբնա:

Հախառակ, հարսն օր ղթուղթ կը կապե ուր մեջքին, թացելույ զատ՝ ղտակ լե կաղտոտե: Կիսուր կէրթա վըր թղթըբացին կռիվ:

— Քու տուն ավիրի՛, — կըսե, — էդ ի՞մալ թուղթ էր էրիր, հարի մկա ղտակ կը թացցուցեր, քու թուղթն օր էրիր՝ զտակ լե կաղտոտե: Ի՛ղթըբաց կըսե.

— Հոգ մ՛է՛նի, նա՛նե, գործն օր կը խոշորնա՝ կտրվելու նշան է:

